ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն
Կենսաբազմազանությունը և կայուն տեղական զարգացումը Հայաստանում

BMZ No.: 2018 670 01 Ծրագրի խորհրդատվական ծառայության

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Գերմանիայի կառավարությունից ֆինանսական աջակցությամբ Վերականգնման վարկերի բանկի (ՎՎԲ/KFW) միջոցով Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունն (ՇՄՆ) իրականացնում է «Կենսաբազմազանություն և կայուն տեղական զարգացում Հայաստանում» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր): Ծրագրի հիմնական նպատակն է բարձրացնել կենսաբազմազանության պաշտպանությունը Հայաստանում և խթանել բնական ռեսուրսների կայուն օգտագործումը, հատկապես Հայաստանի կենսաբազմազանությամբ հարուստ տարածքներում:

Ծրագիրը բաղկացած է երկու բաղադրիչից՝ i) Կենսաբազմազանության և բնության հատուկ պահպանվող տարածքների բաղադրիչ և ii) Անտառային բաղադրիչ:
Պահպանվող տարածքների բաղադրիչը իրականացվում է Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան գրասենյակի կողմից: Անտառային բաղադրիչը կիրականացվի մասնագիտացված միջազգային խորհրդատվական ընկերության կողմից:

Ծրագիրը նպատակ ունի աջակցել նաև սոցիալ-տնտեսական զարգացման նախաձեռնություններին անտառային պահպանության տարածքներին հարող համայնքներում: Այս ջանքերը նպատակաուղղված կլինեն նվազեցնել բնական պաշարների վրա ճնշումը և նվազագույնի հասցնել CO_2 արտանետումները՝ խթանելով էկոտուրիզմը և միջոցներ ձեռնարկել նվազեցնելով վառելափայտի օգտագործումը:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

12 ամիս, հնարավոր հետագա երկարաձգմամբ:

ՎԱՅՐ

ք.Երևան, Շրջակա միջավայրի նախարարություն

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԿՆԱՐԿԻ ԱՄՍԱԹԻՎ

Հունիս, 2025թ.

ՆՊԱՏԱԿԸ

Խորհրդատուի հիմնական խնդիրն է լինելու աջակցել ՇՄՆ-ին՝ ապահովելով «Կենսաբազմազանություն և կայուն տեղական զարգացում Հայաստանում» ծրագրի սահուն և արդյունավետ կառավարումը: Նա պետք է համագործակցի ՇՄՆ տարբեր ստորաբաժանումների, տեղական ինքնակառավարման մարմինների, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և այլ ՊՈԱԿ-ների, միջազգային խորհրդատուի, WWF-ի և այլ կազմակերպությունների հետ:

Խորհրդատուն պատասխանատու կլինի ռազմավարական և այլ որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման համար: Նա անմիջականորեն զեկուցելու է Ծրագրի տնօրենին (Ծրագրի համար պատասխանատու ՇՄՆ նախարարի տեղակալին):

Խորհրդատուի հիմնական առաջադրանքները կներառեն, բայց չեն սահմանափակվի հետևյալով՝

<u>Ռազմավարական և ընդհանուր պլանավորում</u>

- իրականացնող խորհրդատուների և կառավարության համապատասխան գործընկերների հետ համատեղ աջակցել իրականացման ռազմավարության մշակմանը,
- KfW-ի և Ծրագրի իրականացման գործընկերների հետ միասին՝ համակարգված աշխատել՝ մշակելով ծրագրի ցուցանիշների նպատակային արժեքների սահմանումը,
- Մշակել Ծրագրի հայեցակարգ և իրականացնել անհրաժեշտ գործողությունները (կիրականացվեն խորհրդատուների կողմից),
- յուրաքանչյուր նպատակին (արդյունք) հասնելու համար ստեղծել Ծրագրի կառավարման ընդհանուր ժամանակացույց՝ հիմնվելով խորհրդատուների կողմից տրամադրվող տվյալների վրա,
- վերլուծել Ծրագրի առաջընթացը և ներկայացնել համապատասխան առաջարկներ,
- պարբերաբար տեղեկացնել գործատուին և KfW-ին Ծրագրի շրջանակներում նախատեսված տարեկան աշխատանքների և գնումների պլանների իրականացման առաջընթացի մասին,
- բացահայտել և գնահատել Ծրագրի ռիսկերն ու խնդիրները՝ առաջարկելով լուծումներ:

<u>Ծրագրի համակարգում</u>

- համակարգել Ծրագրի երկու բաղադրիչները,
- հետևողական կերպով ապահովել այս երկու բաղադրիչների իրականացումը,
- տեղեկացնել ՇՄՆ-ին Ծրագրի իրականացման խոչընդոտների մասին,
- համակարգել Ծրագրի գործողությունները, որոնք առնչվում են Ծրագրի երկու բաղադրիչներին

- մասնակցել Ծրագրի բաղադրիչների աշխատանքային պլանների մշակմանը

համակարգել Ծրագրի իրականացումը և Ծրագրի իրականացման մեջ ներգրավված պետական մասնագետների աշխատանքը՝ հաղորդակցվելով Ծրագրի համապատասխան փորձագետների հետ:

<u>Հանդիպումներ և դաշտային այցելություններ</u>

- արձանագրել հանդիպման ընթացքում քննարկված և ընդունված որոշումները,
- կազմակերպել հանդիպումներ Ծրագրի շահագրգիռ կողմերի հետ,
- պատրաստել անհրաժեշտ փաստաթղթեր հանդիպումների համար,
- կազմակերպել, վերահսկել և անձամբ մասնակցել ՇՄՆ և/կամ KfW-ի անձնակազմի կողմից իրականացվող գործընթացների վերանայման աշխատանքներին,
- շարունակական կապ հաստատել Ծրագրի բոլոր գործընկերների հետ և տրամադրել տեխնիկական աջակցություն՝ սահմանելու համար ծրագրի, պահանջները, շրջանակը և նպատակները:

<u>Ֆինանսների կառավարում և վերահսկողություն</u>

- համակարգել բյուջետային հատկացումները Ծրագրի երկու բաղադրիչների համար,
- կատարել հաշվետվություններ, հաշիվ-ապրանքագրեր, պայմանագրեր և այլ ֆինանսական փաստաթղթեր, որոնք ներկայացվել են Իրականացման խորհրդատուի, WWF-ի և այլ ծառայություններ մատուցողների կողմից ՇՄՆ-ին,
- պատրաստել բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են ՇՄՆ-ին՝ այս հաշիվ-ապրանքագրերն ընդունելու համար.
- ցանկացած խախտման դեպքում անհապաղ տեղեկացնել ՇՄՆ-ին,
- աջակցել ՇՄՆ-ին՝ հաստատված Ծրագրի միջոցների հատկացման արդյունավետ գործընթաց ստեղծելու հարցում:

<u>Աջակցություն ՇՄՆ-ին հաշվետվողականության ոլորտում</u>

- վերանայել Իրականացման խորհրդատուի և WWF-ի կողմից ներկայացված հաշվետվությունները,
- համադրել KfW-ին ներկայացվելիք հաշվետվությունների պատրաստման համար անհրաժեշտ տեղեկատվությունը (ներառյալ տեղեկատվությունը, որը պետք է տրամադրվի իրականացման խորհրդատուի և WWF-ի կողմից),
- աջակցել ՇՄՆ-ին հաշվետվությունների պատրաստման գործում,
- մշակել և համակարգել հաշվետվությունների համապատասխան ձևաչափեր:

Այլ

- Կատարել Ծրագրի հետ կապված այլ առաջադրանքներ՝ գործատուի հանձնարարությամբ:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թեկնածուն պետք է ունենա աշխատանքային փորձ բնական ռեսուրսների կառավարման ոլորտում, ինչպես նաև Կառավարության տարբեր գերատեսչությունների կամ պետական մարմինների հետ աշխատանքային փորձառություն և գիտելիքներ:

- **Ոլորտային կրթություն՝** բնական ռեսուրսների կառավարման ոլորտում (օրինակ՝ կենսաբանություն, անտառտնտեսություն, լանդշաֆտային պլանավորում):
- **Կառավարման փորձ**՝ Մասնագիտական փորձ նախագծերի կառավարման ոլորտում, ներառյալ ծրագրի բյուջեի պատրաստում, ֆինանսական կառավարման վերահսկում, մոնիտորինգ և գնահատում, անձնակազմի վերահսկում և հաշվետվությունների ներկայացում (համաձայն դոնորների ներկայացրած պահանջների),
- **Կառավարական վարչական գործընթացների իմացություն**՝ Վարչական գործընթացների կառավարման մասնագիտական փորձ, ադմինիստրատիվ գործընթացների լավ իմացության, վարչական գործընթացների լավ իմացություն,
- **Ղեկավարման փորձ**՝ աշխատանքային փորձ որպես թիմի ղեկավար Թեկնածուն պետք է ունենա առնվազն մեկ նման նախկին նշանակում՝ առնվազն 12 ամսվա ընթացքում:
- **Միջազգային փորձ**՝ Աշխատանքային փորձը արտերկրում և/կամ միջազգային կազմակերպությունների հետ աշխատանքը կդիտվի որպես առավելություն,
- **Տարածաշրջանային փորձ՝** Աշխատանքային փորձը Երևանից դուրս, Հայաստանի մարզերում կդիտվի որպես առավելություն:
- **Լեզվի իմացություն՝** Անգլերեն լեզվի բանավոր և գրավոր գերազանց իմացություն:

<u>Ակնկալվող արդյունքներ</u>

Խորհրդատուից պահանջվում է ներկայացնել Ծրագրի առաջընթացի վերաբերյալ հակիրճ ամսական հաշվետվություններ՝ հիմնվելով Իրականացման խորհրդատուի և WWF-ի տրամադրած տեղեկատվության վրա: Հաշվետվությունը պետք է անդրադառնա բոլոր խոչընդոտներին և պետք է վերհանի այն գործողությունները, որոնք պահանջվում են ՇՄՆ կողմից՝ Ծրագրի իրականացմանն աջակցելու համար: Հաշվետվությունը չպետք է գերազանցի երկու էջը: